Ցաւալի է որ այսպիսի ընտիր յատկութիւններով օժտուած Հայ բժիշկ մը, չէ ուզած զինքը ծնող Ազգին գիրկն ապրիլ եւ նետուած է վաղ ծոցն օտարին, ուր ցուրտ քարի մը կտորն իսկ խնայած է անոր յիշատակին։

Ամէն անգամ որ սակայն, Թուրքիոյ Հին բժշկութեան պատմութիւնը քրքրուի, ամէն անգամ որ Հին Հայ բժիշկներու բեղմնաւոր կեանքը սերտուի, աչքի պիտի զարնէ շարունակ տոքթ. Պօղոս Ջօհրապեանի անունը, եւ մեծ պատիւով արձանագրուած պիտի մնայ, Հին Հայ բժիշկներու այն նշանաւոր ցանկին մէջ, զոր 18—19 դարու կէսը կազմած են Ղաշեան, Սինապեան, Սէրվիչէն, Տավութեան, Պէտաննեան, Ռուսինեան, Ասլանեան եւ ուրիշներ։

Իր պատկերը՝ ծերութեանը մէջ քաշուած, զոր կը ներկայացնեմ Հոս եւ զոր մեծ դժուարութեամբ ձեռք անցուց ինձ Համար տոքթ. Նաֆիլեան փաշա, իր պատկերը կ'ընեմ, բարեգութ Հօր մը տիպարը ներկայացնող այդ պատկերը թող իր արձան յիշատակին ըլլայ Հոս, այս անշուք տողերուս Հետ միասին։

*Բագու, 10 Ապրիլ 1909:*

*ՏՕՔԹ. ՎԱՀՐԱՄ Ց. ԹՈՐԳՈՄԵԱՆ*

## ԳՐԱԿԱՆ

## ՌՈՒՍԱՀԱՅՈՑ ՆՈՐԱԳՈՅՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԸ

### ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

### Ա.

Ռուսահայոց նորագոյն բանաստեղծների շարքում անդրանիկն է համարվում Յովհաննէս Յովհաննիսեան։ Նա ամենից տաղանդաւորն է իբրեւ քնարերգակ բանաստեղծ։ Ծնուել է 1864 թ. ապրիլի 26ին Վաղարշապատում։ Տարրական կրթութիւնը ստանում է հօր մօտ, միջնակարգ կրթութիւնը ծխական դպրոցում, յետոյ դառնում է ամենայառաջադէմ աշակերտներից մէկը հանգուցեալ Վահան վարդապետ Բաստամեանի մօտ։ Այդ գիտնական վարդապետը պատրաստում է նրան Երեւանի վարժարանը մտնելու համար, ուր յաջողւում է եւ նա շարունակում է ուսումը մինչեւ 1877 թ. իսկ այդ թուին, աշնանը, Յովհաննիսեան գնում է Մոսկուա եւ մտնում Լազարեան ճեմարանի 3րդ դասարանը։ 1883 թ. աւարտում է դասընթացքը եւ նոյն թուին անցնում Մոսկուայի համալսարանի պատմա-լեզուագիտական բաժինը։ 1888 թուին վերջացնում է բարձրագոյն կրթութիւնը։ Այնուհետեւ վերադառնալով Կովկաս՝ մինչեւ այժմ պարապում է շարունակ ուսուցչական պաշտօնով գլխաւորապէս Ս. Էջմիածնի Գէորգեան Ճեմարանում։

Յովհաննիսեանի գրած առաջին ոտանաւորը եղել է Գէօթէից թարգմանած "Ձկնորսը„ որ հրատարակուել է "Արարատի„ մէջ 1882 թուին, առանց հեղինակի գիտութեան։ Նա աշխատակցել է հետեւեալ պարբերական հրատարակութիւններին — "Աղբիւր„ "Տարազ„, "Արձագանք„ "Արարատ„, "Հանդէս գրական եւ պատմական„, "Լումայ„ Ա. Թարխանեանի "Թատրոն„ եւ Վ. Փափազեանի "Վտակ„։ Նաեւ Մ. Փորթուգալեանի խմբագրութեամբ Մարսէյլում հրատարակուող "Արմենիայում„ զետեղուած ենք տեսնում 1887 թ. մի շարք ոտանաւորներ։ Այդ հանդէսներում Յովհաննիսեանի ցիրուցան ոտանաւորները կարդալով նրա ընկերները, շատ հաւանում են եւ տեսնելով նրա մէջ բանաստեղծական կայծ եւ տաղանդ, քաջալերում, խորհուրդ են տալիս առանձին գրքով հրատարակել։ "Բանաստեղծութիւններ„ վերնագրով մի փոքրիկ գրքոյկ լոյս է տեսնում 1887 թուին։ Առաջին ոտանաւորը նուիրուած է ընկերներին այս խորագրով "ընկերներիս նուիրում եմ առաջին գրական փորձերս„։ Շատ համեստ եւ լուսամիտ գաղափարով է արտայայտում Յովհաննիսեանը իր ընկերական անդրանիկ զգացմունքը.

Ձեզ եմ նուիրում իմ անվարժ տողեր,
Ձեզ, իմ ընկերներ, որ մաքուր սրտով
Դուք պահպանում էք ազնիւ միտք եւ սէր,
Որ կեանքն էք տեսնում դեռ պարզ հաւատով.
Եւ սիրելի է պատանեկութիւն,
Այդ վառ հաւատը, ոսկի երազներ, —
Թէպէտ եւ քակէ բաղդն անագորոյն
Մեր սիրուն պսակի չքնաղ ծաղիկներ։
Միայն այն կայծի, որ միշտ է անմահ,
Սուրբ գեղեցկութիւն եւ սուրբ գաղափար.
Վեհ, ազատ միտքը կենդանի կը մնայ,
Անձնազոհ սէրը խեղճ եղբօր համար։

Գրքոյկը բաղկացած է 114 էջերից եւ բովանդակում է իր մէջ մօտ 69 օրինակ զանազան ոտանաւորներ, որոնցից 5ը թարգմանութիւններ են Նադսօնից, Միցկեւիչից, Հեւլիգից, Պրերադովիչից եւ Սիրոկոմլիից, իսկ մնացած բոլորը — ինքնուրոյն։ Ընկերական նուէրից յետոյ, գրքոյկն սկսւում է "Երկու ճանապարհ„ ոտանաւորով, մի ոտանաւոր, որ իր ժամանակին քննադատների առանձին ուշադրութիւն գրաւեց։ Առաջ բերենք այդ ոտանաւորը ամբողջութեամբ.

Նայում եմ առաջ — երկու ճանապարհ
Բաց է իմ դիմաց. մէկը տանում է
Շքեղ, բաղդաւոր, նիւթական աշխարհ
Քնքուշ զգացմունքի, ուր միշտ ծաղկում է
Գարունը սիրոյ երկինքից օրհնած։
Այնտեղ անթառամ վարդի պսակներ,

digitised by A.R.A.R.@

Երջանիկ օրեր սիրով զարդարուած
Եւ վայելչութեան անձկալի ժամեր
Աշխատաւորի վաստակած գլխին
Պիտի պարգեւեն հանգիստ խնդագին։

—

Միւսն անապատ ինձ դուրս է հանում,
Որ կարօտում է մշակող բազկի․
Այստեղ պերճախօս վարդ չէ բուսանում, —
Միայն տատասկը եւ փուշը վայրի․
Եւ կեանքը մեռած եւ օդը խեղդող․
Սրտացաւ խնամք, եթէ այդ լինէր,
Միշտ երախտամոռ հոգուց ոտնակոխ․
Չէ ժպտում արեւ, սեւաթոյր ամպեր
Գոռ փոթորիկ են երկրին գուշակում։ —
Եւ ես կանգնած եմ եւ խոր մտածում,
Ո՞ւր իմ անհաստատ քայլերըս ուղղեմ,
Արդեօք երկուսից ես ո՞րը ընտրեմ։

—

Այնտեղ, զգում եմ, փարթամ, երջանիկ
Գըլորուելու են իմ կեանքի օրեր․
Աչագեղ կոյսը հայեացք չքնաղիկ
Պարգեւում է ինձ եւ սրբանուէր
Նոճիների տակ պիտ' գլուխս հանգչի
Նորա մարմարիոն կուրծքին նազելի,
Եւ պիտի գըտնեմ այն վառ աչերում
Ես դրախտավայել մի վայելչութիւն...

—

Այստեղ ականջըս փայփայելու չէ
Կանաչ պուրակում թռչնոց մեղեդին․
Ոչ պիտի տեսնեմ սըփռոց թաւիշէ
Ես անուշաբոյր ծաղկոտ մարգերին։
Ո՛չ․ արիւն-արցունք, լըքեալ հառաչանք,
Անտէր ամբոխի անվերջ տառապանք․
Արդար քրտինքով մշակած գետին
Աւարի մատնած — ահա իմ բաժին։

—

Բայց այնտեղ կեանքը չունի նըպատակ
Բացի անձնական բարօրութիւնից,
Իսկ այստեղ գործի ասպարէզ արձակ,
Ազնիւ եւ վըսեմ, թէեւ փշալից։ —
Եւ ես կանգնած եմ եւ խոր մտածում...
Կեանք, ինձ երկուսից ո՞րն ես պատրաստում։

Սակայն Յովհաննիսեանը որոշ պատասխան չի տալիս, որոշ ընտրութիւն չի անում․ բայց ո՞վ չգիտէ, որ բանաստեղծը, ծնուած դառն աշխատութեան անվերջ կարիքների այդ զաւակը, ներշնչուած մուսայից՝ կոչուած է հասարակութեան դարեւոր խոցերը իր սրտում կրելու։ Նրան վիճակուած է գործելու այն ճանապարհի վրայ, ուր լսում է "անտէր ամբոխի լըքեալ հառաչանքը, ուր պերճախօս վարդ չէ բուսանում, այլ միայն տատասկը եւ փուշը վայրի„։ Այո՛, այդ է որոշուած ասպարէզը թշուառ բանաստեղծի, ասպարէզ "ազնիւ ու վսեմ, թէեւ փշալից„։ Նա իր մտքի եւ զգացմունքների թափով եւ թռիչքներով շատ հեռու պիտի թռչի այն ճանապարհից, ուր "ծաղկում են գարուն եւ վարդեր, ուր փարթամ, երջանիկ գլորուելու են կեանքի օրերը, բայց ուր կեանքը չունի նպատակ բացի անձնական բարօրութիւնից„։ Նա պէտք է արհամարհէ կեանքի փարթամութեան վայելքները, հալածէ շահը եւ բռնութիւնը եւ որպէս սուրբ ճշմարտութեան անվեհեր զինուոր, ծովացած արտասուքների ու հառաչանքների բուվերի միջից միշտ պէտք է առաջ գնայ, շուրջը ստրկութեան ճնշող խաւարակուռ շղթաները փշրելով, դէպի գեղեցիկ նպատակ, դէպի հասարակաց բարօրութեան անձնանուէր եւ սրբանուէր գործունէութիւն։ Եւ երբ մրցական յաղթանակով, խաչի ծանրութիւնը իր ուսերի վրայ առած, եռանդոտ քայլերը կը մօտեցնէ դէպի Գողգոթայի բարձունքը, այնտեղ այն ժամանակ անկեղծ ոգեւորութեան փառքի շղանքներով, ծիրանեկ ցոլքերով կողջունէ նրան Ազատագրութեան Արշալոյսը Սարի գագաթից եւ իսկական կեանքը կը թռթռայ նրա յոգնավաստակ դէմքին իր շէնքի հոյակապ խրոխտութեամբ ու քրտնալից բաց ճակատին սիրոյ արցունքի մարգարիտներ կը շարէ՝ փոխարէնը իբրեւ արդիւնք եւ հատուցում այնքան նեղութիւնների ու տառապանքների, որ բանաստեղծը կրել է իր ընտրած եւ անցած փշոտ ճանապարհի ասպարէզում, տանջուող մարդկութեան ցաւերը ամոքելու նպատակով։ Գիտեմ փշո՛տ է ճանապարհդ, սիրելի բանաստեղծ, ահագին անդունդներով ու վիհերով շրջապատուած, բայց անվախ պէտք է անցնես այդ ճանապարհով․ դու ծնուել ես տանջանքների մէջ եւ հէնց այդտեղ պէտք է որոնես քո փառքն ու երջանկութիւնը։ Թող ճանապարհին արիւնածարաւ գայլերը որքան կուզեն՝ ոռնան, դու չվախենաս, թող որքան հողմ, փոթորիկ, կայծակ գլխիդ վերեւը որոտան, դու չսարսափես, թող Ներոնական չարամիտ մարդիկ կոպիտ նիւթապաշտական սիրոյ դիմակների տակ, յոռետես մոլեգնութեամբ ծաղրի ենթարկեն քո փայփայած գաղափարները, դու ուշադրութիւն մի՛ դարձրու, մի՛ յուսահատուիր, անյողդողդ եղիր յաման՝ երկաթի կամքով, նորից ու նորից ոյժ տուր քայլերիդ, եւ երբ գլուխդ վաստակած կը թեքես դէպի Գողգոթա, ուր հազարաւոր սուրբ նահատակների ճակատներից առուականման կարմիր արիւն է կարկաջում, բարկութեան հրով գոչիր ամբոխին․ "Մեկնի՛ր, փշեղէն պսակ„․ այն ժամանակ Ազատութեան Ոգին իր լուսեղէն սաւառնող թեւերի վրայ կը տանէ քեզ դէպի Անհունը, ուր այլ եւս փուշ ու տատասկ չես տեսնիլ, ուր օդ կը շնչես ամբրոսական բուրմունքներով խնկարկուած չքնաղագարդ վարդ-մանիշակների մէջ, ուր կեանքը եւ ամէն ինչ խաղաղ եւ անդորր կը լինի, ուր այլեւս փոքրոգութեան կրքերը չեն սողալու ոտքերիդ տակ, ուր եղբայր եղբօր եւ արիւնակցի դէմ լարած դաւադրութեան չարաբաստութիւններ ամենեւին գոյութիւն չեն ունենալ եւ այլն։ Իսկ ներքեւում, շուրջը այլազան ծաղիկներ սփռած վեհ նշխարներիդ ամփոփող գերեզմանը մի օր երկնային անմահ սիրոյ սուրբ բարբառ հնչեցնելով կաւետէ արդարութեան մարդկանց մի նոր կեանքի արեգակ, կը պատմէ ապագայ սերնդին, թէ ինչպէս տանջուեց թշուառ բանաստեղծը, թէ ինչպէս արհամարհելով փառքը, ոսկին, ճաշակեց

digitised by A.R.A.R.@

դառնութեան բաժակը մինչեւ յատակը, թէ ինչպէս ձեռքին բռնած գիտութեան վառվռուն ջահը՝ խաւար ճանապարհի հեռաւոր չերտերը լուսաւորեց՝ դառնալով հետնորդների համար մի գեղեցիկ ուղեցոյց։ Գերեզմանում դեռ ապրող յաւիտենական գաղափարը, իբրեւ օրհասան յոյսերի ու ցանկութիւնների վառ երջանկութեան աղբիւր, անմահութեան սիրոյ շիթեր կը սրսկէ մարդկանց դէմքերին եւ պատմական յիշատակներով նրանց սրտի խորքերում անջնջելի կը դրոշմէ սկզբունքներ Բայրոն, Գէօթէի եւ [illegible], կանգնեցնելով մի գեղեցիկ արձան "մէկը շատերի համար„ տօգորուած ամենանուիրական գաղափարի։

Խե՛ղճ բանաստեղծ ի՞նչ է պահանջում խաւարամիտ ամբոխը քեզնից, ուրախութեան տաղե՞ր, բայց արդեօք նա հասկանո՞ւմ է թէ ինչ տանջանքներով եւ հոգսերով է ծածկուած քո սիրտը, թէ ի՞նչ ոգեւորութեան աղբիւր է քեզ խօսեցնողը, թէ ի՞նչ վշտի եւ թախիծի զգացմունքներ են թռչում քո մելամաղձոտ քնարի լարերից, ո՛չ նա շատ անտարբեր է լսում քո "երգ ու վէրք„ին, միայն մի նշանաբան ունի սիրուած "Գնա մեռիր, արի սիրեմ„։

Ասում են. "Պօէտ, մենք չենք կամենում
Արտասուք տեսնել, լսել հառաչանք.
Ի՞նչ ես քո այրող վիշտը մեզ պատմում,
Ի՞նչ ես դու ողբում քո անվերջ տանջանք,
Մենք միայն վայելք ուզում ենք կեանքից,
Հրճուանք, խնդութիւն եւ ուրախ տաղեր,
Մեզ անհոգ ժամեր երգիր ոգելից,
Կեանքի խնջոյքը, գինով բաժակներ...

—

Եւ դու լսում ես անմիտ ցնծութեան
Ճիչեր արձակած անդուռն բերանից,
Եւ չես սպասում մի մաքուր զգացման,
Մի ազնիւ սիրոյ նշոյլ դոցանից...
Տեսնում ես շուրջդ կարիք եւ զրկանք
Եւ ստրկութեան ճնշող շղթաներ.
Եղբայրքդ, կեանքից չը տեսած գգուանք,
Վաղ ճաշակել են հոգեմաշ ցաւեր։
Չես կարողանում քնքուշ մատներով,
Ոգեւորութեան երջանիկ ժամում,
Դիպչել լարերին, թէ հլու քնարով
Երգելու լինիս մի անհոգ խնդում,
Եւ կատաղում ես որ քո զգացմունքին,
Վեհ հոգուդ չը կայ մի խօսք համակիր.
Յուսահատւում ես որ քո քարոզին
Առաքելական՝ չունիս ունկնդիր։

—

Բայց հանգիստ մնա՛, կը գայ ժամանակ —
Կ'անցնէ խաւարը մոլեռանդութեան,
Կը գայ նոր սերունդ, զգալու ընդունակ,
Լուսածին որդիք սուրբ ազատութեան.
Եւ արքայական քո բաց ճակատին
Հրպարտ սարդենին կը փայլի փառքով,
Եւ քո թունալից թունող տողերին
Մարգարիտ կ'շարեն սիրոյ արցունքով„։

Հալածանքը, արհամարհուիլը եւ նման բաները անհրաժեշտ են անհատին մեծ լինելու համար ոչ թէ խօսքով, այլ գործով, ոչ թէ միայն բանով, այլ արդեամբ։ Եթէ մեր ազնիւ ու թշուառ ազգը չհալածէր ու սիրէր, յարգը ճանաչէր իր գործիչների, չէ՞ որ նրանց էլ հազարաւոր կեղծաւոր փարիսեցիների կարգը դասած պիտի լինէր։ Ցոյց տուէք վերջին 40—50 տարուան ազգային պատմութեան մէջ գէթ միմիայն ազնիւ եւ համբաւաւոր գործիչ քաղաքական թէ գրական ասպարիզում, որ ճշմարտութեան սիրոյ համար զոհուած, հալածուած չլինի։ Պէտք է ներողամիտ լինել այն ազգին, որ կը փափագի իւր ձեռքով հալածել իրեն եռանդուն եւ անշահասէր գործիչները, որպէս զի այդ հալածանքների մէջ երեւան գայ, յայտնագործուի նրանց դիւցազնական արիութիւնն ու մեծահոգութիւնը, եւ որը կը փափագի միշտ իրեն փրկիչների ձայնը նաեւ խաչի վրայ էլ լսել տալ թէ՝ "Հա՛յր, թո՛ղ դոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն„, որպէս զի այդտեղ էլ մեռնելուց յետոյ՝ նրանց անուան ու համբաւին՝ մոռացութեան տեղից յարութիւն առնել տալով խօսեցնէ գերեզմանները, այո՛, "գնա մեռիր, արի սիրեմ„։ Օ՜, ո՜րքան զոհեր է պահանջում մարդկութիւնը իր վերին նպատակներին եւ ձգտումներին հասնելու համար։

## Բ.

Ժամանակակից բանաստեղծների համեմատութեամբ՝ Յովհաննիսեանի բանաստեղծական թռիչքները գողտրիկ են, երեւակայութիւնը՝ հարուստ։ Նրա բանաստեղծութիւնների փոքրիկ ժողովածուն լի է իսկական բանաստեղծական գոհարներով։ Ահա բազմաթիւ գոհարներից եւ մէկը, ուր հայրենասէր բանաստեղծը տանում է մեզ իր հայրենի հրաշագեղ բնութեան ծոցը։

Տեսե՞լ ես արդեօք այն բլուրները,
Ուր ճոխ ծաղկում է մշտական գարուն։
Ճանաչում թաղուած այն այգիները,
Ուր իբրեւ գոհար խաղողն է հասնում։
Տեսե՞լ ես դաշտեր, մարգագետիններ,
Ու բացուած այնտեղ վառ շուշան մեխակ.
Շնորհատու արեւ, ոսկի նշոյլներ
Եւ միշտ սիրաշունչ երկինք կապուտակ։
Տեսե՞լ ես ծերուկ ժայռերի միջով
Կատաղած անցնելիս գետը փրփրած,
Ականջ դրե՞լ ես խռոված հոգով
Այն աղմկալից գոռոցին ալեաց։
Տեսե՞լ ես գիւղը հովտի մէջ մենակ
Եւ շուրջը փռուած շքեղ պարտէզներ
Եւ ոսկի հասկեր եւ խաղաղ վտակ, —
Լսե՞լ ես քաղցրիկ արտոյտի երգեր։
Եւ դու տեսե՞լ ես նորա գանձն անգին,
Դէմքով հրեշտակ, հասակը փարթամ
Հարաւոյ դուստրը, հրապոյրքն աչերին,
Շրթունքը ալ վարդ, ժպիտն անթառամ...
Սիրատանջ այրուած քնքուշ այտերից
Քաղե՞լ ես համբոյր որ քաղցր է մեղրից։

կամ վերցնենք եւ այս ոտանաւորը, որի մէջ գաղափարն է վսեմացնում իդէալիստական աշխարհայեցողութեան տիեզերական թարգման այն Մեծ վարդապետի, որ տանջուեց մշտերով եւ սիրոյ յաղթանակով քարոզեց մարդկութեան սէր եւ ճշմարտութիւն՝ փոխադարձ ներողամտութեամբ հաշտեցնելու եղբօրը եղբօր հետ։

Անլոյս խաւարը, չարութեան ոգին
Տիրել էր աշխարհ, եւ վաղուց մարդիկ
Ապառաժ սրտով կործանել էին
Խանդավառ զգացման պատկեր գեղեցիկ,
Անցած օրերի մաքուր պարզութիւն
Ապականութեան ասպարէզ դարձած,
Էլ չէր կարմրում ներողամտութիւն,
Առաքինութեան փառքըն էր չիջած...

—

Բայց հասաւ օրը մի նորոգ կեանքի,
Եւ Բեթղեհեմից նոր արեւ ծագեց,
Այրից առաջին ճիչը Մանուկի
Փրկութեան ժամը մարդկանց աւետեց.
Նորա ժպիտն էր որ անհուն սիրով
Սրտերի սառուցն պիտ՝ հալեցըներ,
Եւ մարդկութիւնը Նորա շրթունքով
Ճշմարտութիւնը պիտի ուսանէր։

Մեր քնարերգակ բանաստեղծի ստեղծագործութիւնը տարբեր բնաւորութիւն է ներկայացնում միւս բանաստեղծների ստեղծագործութիւններից։ Նա, այսպէս ասած, Սմբատ Շահազիզի շարունակութիւնն է կազմում, իսկ Ալ-Ծատուրեանը՝ Գամառ-Քաթիպայի։ Առաջինը քնարական դաշնակներ է հնչեցնում եւ գործ ունի սիրտը շարժող զգացմունքների զօրեղ աղբիւրներ բղխեցնելու հետ, երկրորդը տոգորուած է աւելի լիրիկական զեղմունքներով եւ աւելի գործ ունի գլխի, քան սրտի հետ։ Եթէ վերջինս աշխատէր սրտի եւ զգացմունքների թելեր շարժելու, ես կարող եմ ասել, որ Ալ-Ծատուրեանը փառաւորապէս կը մրցէր եւ կը գերազանցէր իր բոլոր պաշտօնակիցներին, որովհետեւ նա լաւ գիտէ վարպետօրէն իր ոտանաւորներին առհասարակ տալ [illegible] արտայայտութիւն եւ զարթեցնել գեղարուեստական ճաշակ բանաստեղծական [illegible] ձեւակերպութիւնների մէջ։ Գամառ-Քաթիպան լինելով որպէս ձգտումի եւ գործի բանաստեղծ՝ նոյն տպաւորութիւնն է թողնում մեզ վրայ եւ նրան հետեւող Ալ-Ծատուրեանը։ Երկուսի բանաստեղծութիւններում եւս բարձր է հնչում ռոմանտիքական ձեւերի տակ հայրենասիրական շեշտը՝ "վաղ թէ ուշ հայ ազգի համար վարդահոտ գարուն պիտի գայ„ նշանաբաններով։ Յովհաննիսեանի ազդեցութիւնը եւս պարզապէս նկատելի է Ալ-Ծատուրեանի, ինչպէս եւ նոր բանաստեղծներից շատերի վրայ։ Յովհաննիսեանը աշակերտած լինելով Մոսկուայի Լազարեանց ճեմարանում մեր՝ արեւելեան նորագոյն գրականութեան վշտի եւ սիրոյ երգիչների Նախահայր Սմբատ Շահազիզի մօտ՝ իր աշխարհահայեացքը կազմակերպել է նրա ազդեցութեան տակ։ Որովհետեւ Սմբատ Շահազիզի վրայ խոր տպաւորութիւն են գործել Բայրոնը եւ ռուս բանաստեղծներից Պուշկինը եւ Լերմոնտովը. նոյն բանաստեղծների ազդեցութիւնը զգալապէս եւ հետեւապէս անցել է եւ Յովհաննիսեանի բանաստեղծութիւնների մէջ։ Ինչպէս երեւում է. ոչ այնքան Եւրոպական որքան գլխաւորապէս ռուս գրականութեան ազդեցութիւնն է ցոլանում ռուսահայ գրողների ու բանաստեղծների վրայ։ Իմանալու համար այդ ազդեցութեան չափը եւ ինչ կերպով պարտաւորական համարուիլը, յայտնի հայասէր եւ հայ գրականութեան լուրջ ուսումնասիրութեամբ զբաղուող Իւրի Վեսելովսկին դիմել է 1907 թ. հայ գրողներին այդ խնդրին վերաբերող հարցերով եւ նրանցից ստացած պատասխանները զետեղել ռուս պարբերականներից մէկում։ Հայ գրողներից պատասխանել են Նար-Դոս, Շիրվանզադէ, Լէօ, Ղ. Աղայեան, Գէորգ Չուբար, Թատերգակներից՝ Գաբրիէլ Սունդուկեան, իսկ բանաստեղծներից՝ Սմբատ Շահազիզ, Յովհ. Յովհաննիսեան, Յովհ. Թումանեան. Ալ. Ծատուրեան եւ Ա. Իսահակեան։ Ափսոս այդ տեղից բացակայում են ուրիշ շատ տաղանդաւոր եւ աչքի ընկնող գրողներ, որոնց պատասխանների արտայայտութիւններն էլ նոյնչափ անհրաժեշտ պէտք է լինէին մեզ համար եւ հետաքրքրական։ Ցանկալի էր այդ մասին լրիւ հաշուեկշիռ կազմել եւ լաւ կը լինէր, եթէ գործին օժանդակողները ճիշտ տեղեկութիւններով, անշեղ ցուցմունքներով եւ անկողմնակալ գաղափարներով առաջնորդէին Վեսելովսկուն մեր գրողների մասին, առանց նկատի ունենալու [illegible] շահերը եւ յարաբերական չափը։ Դա կը լինի միակ ազնիւ ճանապարհը՝ ընթերցողին ցանկալի օգուտ տալու նկատմամբ։ Սմբատ Շահազիզը իր պատասխանում, չգիտեմ ինչո՞ւ, միայն Պուշկինի եւ Լերմոնտովի անունն է ակնարկել եւ Լորդ Բայրոնի մասին լռութեամբ անցել, մինչդեռ նրա "Լեւոնի վիշտը„ պօէմը անգլիական այդ յայտնի բանաստեղծի "Չայլդ-Հարոլդի„ ազդեցութեան դրոշմն է կրում, որի մասին ժամանակին ակնարկել են քննադատները։ — "Առանձնապէս իմ մասին, ասում է Յովհաննիսեանը, ի միջի այլոց, իր պատասխանում, կարող եմ հաղորդել, որ թէպէտ ինձ վրայ զօրեղ տպաւորութիւն արած առաջին բանաստեղծները Բայրոնն ու Հէյնէն էին, սակայն յետոյ ես շատ սիրեցի Պուշկինին ու Լերմոնտովին„ (Թարգմ. Վեսելովսկուց Եմմ. քահ. Նազարեանց)։ Այո՛, ուսումնասիրելիս հայ գրողների կեանքը եւ գրուածքները, մենք տեսնում ենք, որ նրանց վրայ ռուս գրականութեան ազդեցութիւնը մեծ է եւ ահագին "այդ բանը խոստովանում են եւ իրանք հայ գրողները տուած պատասխաններում„։ Սիրոյ երգերի մէջ Յովհաննիսեանը Նադսօնի ոգին եւ նմանութիւնն է յիշեցնում, տեղ-տեղ էլ Պլէշչեեւի բարի եւ պարկեշտ մուսան։ Նա երգում է գաղափարական սէր, մաքուր եւ անբիծ սէր քնքոյշ զգացմունքների տակ. —

Դու չը կամիս, ո՛վ կոյս, լինել
Իմ տանջանքին մասնակից.
Դու չը կամիս հրաժարուել

digitised by A.R.A.R.@

Այդ քո անհոգ վիճակից։
Բայց թէ սիրտս դու տեսնէիր,
Ճանաչէիր իմ հոգին,
Ի՞նչ է վիշտը — կիմանայիր,
Որ սիրէիր դու երգչին։
Շատ գոհարներ վառ աննման
Ալիքներումն են թաղուած,
Շատ զգացմունք, սէր անսահման
Սրտիս խորքումն են պահուած։

Կան բանաստեղծներ, որ թողած իդէալական սէրը, վսեմն ու գեղեցիկը, երգում են հեթանոսական, մարմնական սէր, մի սէր, որ մարդու անասնական աստիճանի վրայ է կանգնեցնում եւ նրա մէջ գրգռում միայն ստոր բնազդներ ու կրքեր։ Երբ մի բանաստեղծութիւն “Հուր աչերից„ ու “գեղեցիկ ստինքներից„ բռնած երգում է սիրեկանի մինչեւ “պորտը„, այդտեղ արդէն նա կանգ է առնում եւ դադարում է բանաստեղծութիւն լինելուց։ Այդտեղ արդէն մարդկային բնական գիտակցութիւնը եւ համեստութեան զգացմունքը ստիպուած են լինում բողոքելու այդ տեսակ բանաստեղծութեան դէմ։ Բանաստեղծութիւնը պէտք է լինի ազնիւ տեսակից, փափկացնէ կոշտը, կոպիտը եւ կրթէ, նրբացնէ գեղարուեստական ազնիւ ճաշակներ։ Յովհաննիսեանի մեղեդիները թարմ ոյժերով, անկեղծ ոգեւորութեան ներշնչումներով եւ գեղեցիկ Գաղափարներով երեւան եկան։ Ես շատ լաւ յիշում եմ, թէ ինչպիսի յաջողութիւն գտաւ եւ ինչպիսի հետաքրքրութիւն շարժեց նրա Բանաստեղծութիւններ առաջին փոքրիկ ժողովածուն ժամանակակից մամուլի կողմից եւ հայ հասարակութեան խաւերում։ Այդ 1887 թուականին էր, այն ամուլ եւ աննախանձելի ժամանակաշրջանում, երբ Սմբատ Շահազիզի քնարը “Լեւոնի վիշտը„ պօէմից յետոյ լռել էր վաղուց եւ սպառնում էր դադարած համարուել այլ եւս հասարակաց պիտոյքների երգիչ լինելուց, իսկ Գամառ-Քաթիպայի հեգնող բողոքի ձայնը Նոր-Նախիջեւանից եւ Ղեւոնդ Ալիշանի հայրենասիրական մրմունջները Ադրիականի ափերից հազիւ էին արձագանք գտնում լոյս ասպարիզում, Կովկասի հայութեան մէջ։ Ահա այդ ժամանակ հայ բանաստեղծական գրականութիւնը այն աստիճան հոգէ-վարք դրութեան մէջ էր երերում, որ մարդ յուսահատւում էր եւ շրթունքներից դուրս թռչում “Ո՞ւր էք, հայ բանաստեղծներ„։ Շատերը սպասում էին նոր բանաստեղծի, կարօտելով նրանից նոր խօսքի, նոր ոգեւորութեան կայծուկրակի վառվառման։ Եւ ահա հանդէս եկաւ Յովհաննիսեանը իր բանաստեղծական անուշ մեղեդիներով եւ հայկական կեանքի այդ չոր անապատի մէջ ուժգին հնչեցրեց քնարը։ Հին ուղղութիւնը տապալուեց եւ տեղի տուեց նորին։ Սկսուեց նոր երգ, նոր ելեւէջ, նոր ախորժալուր նուագածութեան ներդաշնակութիւն, նոր հոսանք, նոր կեանքի վերածնումն, ու նոր մտքերի թարմ ոգեւորութիւն։ Մամուլը միաբերան վկայելով Յովհաննիսեանի բանաստեղծական անպայման տաղանդը՝ մեծ խանդավառութեամբ դիմաւորեց նրան, ողջունելով որպէս մի նոր Մեսիայի գալուստը, Մեսիայի, որ դուրս էր եկել հրապարակ իր ազգի պաղած, ձիւնապատ եւ մռայլ թախիծով կաղապարուած սրտերը արեւի պայծառ ճառագայթներով ջերմացնելու, իսկական քնարերգութեան ազդու շեշտերով սթափեցնելու նրան դէպի Լոյս եւ Յառաջադիմութիւն, հնութեան բեկորների մոխիրներում թաղնուած կրակէ շեղջ ու կայծերը նորից բորբոքելու նոր ոյժով, նոր հրավառութեան նիւթերով։ Քննադատներից շատերը իրենց հիացմունքն էին յայտնում, համեմատելով նրան Գամառ-Քաթիպայի հետ, մինչեւ իսկ վեր էին դասում նրանից։ Տաճկահայ գրագէտներից մի ծանօթ, նշանաւոր դէմք Լեւոն Բաշալեան “Արեւելքի„ 1887 թ. 1154 ում, քննադատելով Յովհաննիսեանի բանաստեղծութիւնները, ի միջի այլոց այս խօսքերն է գրել նրա մասին՝ “Հիւսիսէն, ձեռնադարդ պայծառութեանց ու գարնանագեղ տարածութեանց, համապարտակ մշուշի եւ ճառագայթաձակ արեւու երկրէն կու գայ այս գիրքը, որ ձմրան վեհ գիւրութիւնն ու գարնան ժպիտն ունի, մշուշին աստիկ մելամաղձութիւնն եւ կենսալի ճաճանչներն արփւոյն։ Հեռուէն կու գայ, այլ ինչքան մօտ է մեր սրտերուն։ Բանաստեղծութեան գիրք մը, բայց այս տեսակ բանաստեղծական գիրք մը երբէք չէր եկած Ռուսահայոցմէ...„։ Մեր յայտնի մանկավարժ Սեդրակ Մանդինեանը՝ նոյնպէս նպաստաւոր քննադատութիւն գրեց “Աղբիւրի„ 1888 թ. N. 1 ում։ Լոյս տեսան մի շարք ոգեւորուած մատենախօսականներ ժամանակակից հայ պարբերականներում Ալ. Քալանթարի, Ղ. Աղայեանի, Գ. Ենգիբարեանի եւ ուրիշների Ռուսաց մամուլում եւս երեւեցան համակրական յօդուածներ՝ Минасъ Берберянцъ, „Армянск. Беллетристы т. II.“ եւ А. Микаэльянцъ, „Современ. Армян. Поэты“ 190[illegible]. Մի չտեսնուած աչքի ընկնող երեւոյթ պէտք է համարել եւ այն, որ բանաստեղծութիւնների ժողովածուն շատ կարճ ժամանակամիջոցում սպառուեց եւ յաճախ ձեռքից ձեռք անցնելով դարձաւ երկսեռ աշակերտութեան ու երիտասարդութեան համար որպէս մի “Հաւատոյ Հանգանակ„։ Կարճ միջոցում նոյնպէս ոտանաւորներից մի քանիսը երգւում էր հայ ժողովրդի բերանում, օրինակ՝ “Հատիկը„, “Նոր գարուն„, “Արագն եկաւ„, “Ալագեազ բարձր սարին„, “Ա՜խ, տուէք ինձ քաղցր մի քուն„ եւ այլն։ Աշակերտութեամբ անցնում էին եւ դասագրքերի մէջ, ուսումնարաններում աւանդւում ու այդպիսով աւելի տարածուեց բանաստեղծի հռչակը։

## Գ.

Անցաւ ժամանակ։ Լռեց Յովհաննիսեանի քնարը, լռեցին եւ նրա մասին գովեստներն ու գրուատիքները։ Նա այնուհետեւ ուշ-ուշ էր երեւում հայ հանդէսներում եւ շատ ժլատութեամբ էր բաց թողնում նոր ոտանաւորներ։ Մինչեւ 1891 թ. երեւում էր “Աղբիւր-Տարազում„, իսկ 1895–1908 թուականներում երբեմն “Լումայում„, երբեմն էլ “Արարատում„ եւ այլն։ Յով-

digitised by A.R.A.R.@

հաննիսեանը մի առ ժամանակ մոռացուեց, նոր բանաստեղծներ լոյս ընկան՝ Աղ. Ծատուրեան, Լեւոնեց, Յովհ. Թումանեան, Աւ. Իսահակեան, Ղանթ. Լ. Մանուէլեան, Յար. Թումանեան, Ջաւադ-բեկ Բալուղեան, Ս. Սափարեան, Պետ. Մոճոռեան, Դ. Դեմիրճեան, Կ. Կոստանեան, Արամ Չարըգ, Վ. Միրաքեան, Ց. Ցակոբեան, Շուշանիկ Կուրղինեան, Սնոփրիոս Անոփեան, Ա. Ջանեան, Հ. Համբարձումեան, Ց. Տէր-Գէորգեան, Ն. Չիթջօղեան եւ ուրիշներ։ Դրանք սկսեցին երգել տարբեր ձեւերով եւ առանձնայատկութիւններով։ Մի քանիսը դրանցից տաղանդաւոր էին եւ գրականութեան մէջ տեղ բռնեցին որպէս բանաստեղծներ։ Իսկ մի քանիսն էլ ասուպի նման իրանց աղօտ փայլը միայն երեւեցրին գրական հորիզոնում եւ շուտով չքացան բանաստեղծ կոչման առաջ մի խոշոր թիւրիմացութիւն ներկայացնելով, առանց յետեւից մի պայծառ գիծ կամ հետքի նշոյլ թողնելու։ Քննադատները այնուհետեւ սկսեցին զբաղուել տաղանդ եւ շնորհք ցոյց տուող նոր բանաստեղծների արտադրութիւններն ուսումնասիրելով, միայն երբեմն համեմատութիւններ անելիս յիշւում էր Յովհաննիսեանի անունը, համարելով նրան այդ ժամանակ «ամենատաղանդաւորը, բայց եւ ամենածոյլը»։ Մինչեւ անգամ կարծիք կազմուեց, որ մի լաւ բան տալուց յետոյ, Յովհաննիսեանին վաղեմի ընդունակութիւնը դաւաճանել է եւ նա մտել է Սմբատ Շահազիզի պէս դադարած երգիչների շարքը։ Գրական հրապարակը սանձարձակապէս լցրեց ու վխտաց ինքնաբոյս, անկոչ սկսնակ բանաստեղծներով։ Ընթերցողի գեղարուեստական ճաշակը փչացաւ նրանց անհամ [illegible] եւ հոգին կրկին ծարաւի զգաց Յովհաննիսեանի նման իսկական քնարերգակ բանաստեղծի ներկայութեան. Եւ ահա Յովհաննիսեանը նորից ասպարէզ եկաւ 1908 թուին՝ այս անգամ իր բանաստեղծութիւնների մեծ հատորով։ Նրա մասին կազմուած նախապաշար, բիւր կարծիքները հիմն ի վեր տապալուեցին։ Նորից տեսան սիրած բանաստեղծին իր կոչման բարձրութեան վրայ եւ նրա մասին քննադատները աւելի համակրութեամբ խօսեցին։ Գրեց Գր. Վանցեանը «Մշակում», Հայկ Տէր-Աստուածատրեանը՝ «Խարազանում», Զօնը՝ Տէր-Գիւտ քահ. Աղանեանի «Հայրենիքում» եւ Մինաս Բերբերեանը՝ «Արարատում»։ Վերջինս «Սգաւոր Իդէալիստ» խորագրով իր քննադատականի մէջ ասում է... «Այդ վեհ գաղափարը — աշխատել, կռուել, զոհուել մարդկային աւելի լաւ ապագայի համար — ոյժ եւ կարողութիւն է տալիս Սգաւոր Իդէալիստին չընկճուել կեանքի արհաւիրքների երեսից եւ Իբսէնի Բրանդին յատուկ յամառութեամբ եւ Մարսէլիէզը յիշեցնող ոգեւորութեամբ կրկնել՝

Դէպի վե՛ր, դէպի վե՛ր... Անվերջ է ուղին,
Յոգնեցան բազուկներս՝ այս կռուում անզօր,
Սպառեցաւ եւ վերջին ոյժն էլ ծնկներիս —
Դէպի վե՛ր, սարն ի վե՛ր քաջասիրտ զինուոր։
Աւելի կարծրանան թող այս սեւ ժայռեր,
Աւելի թող ապառնայ անդունդն ահաւոր.
Դեռ շունչ կայ բերանումս, շարժւում են ձեռքեր,
Դէպի վե՛ր, սարն ի վե՛ր, իմ արի զինուոր։
Դեռ հեռու է կատարն անամպ ու յստակ.
Բայց եթէ չը հասնենք այնտեղ մենք այսօր,
Վաղն այնտեղ ենք անշուշտ, մերն է յաղթանակ
Դէպի վե՛ր, սարն ի վե՛ր, անվեհեր զինուոր։

Ահա ո՞վ է տանում մեզ, Յովհաննէս Յովհաննիսեանը, այս վհատ ու լքեալ Օրերին»։

Յովհաննիսեանի հայրենասիրական հառաչանքները խոր են եւ վիրաւոր զգացմունքների գեղեցիկ արտայայտութիւն ունին։ Նա վառ գոյներով եւ հարուստ մտապատկերներով է պատկերացնում մեզ հայ ազգի դրութիւնը։ Այդ բանում ցոյց է տալիս, որ ինքը Գամառ-Քաթիպայի, Ալիշանի եւ Շահազիզի անմիջական շարունակող տաղանդաւոր աշակերտն է։ Համոզուելու համար պէտք է կարդալ «Դարերով լալին, ո՜վ մայր հայրենիք»։

Նա ունի եւ ժողովրդական մոտիվներ՝ աշուղական ձեւով գրուած։ Այդտեղ փայլում է իսկական ազգային պօէզիայի ադամանդը, որի մէջ ցոլանում է մեր բուն ժողովրդի ստեղծագործական հանճարածնունդը իր իսկատիպ պատկերով ու յատկանիշներով, որպիսիք են՝ «Արագն եկաւ», «Աշուղը», «Նոր գարունը», «Ալագեազ բարձր սարին», «Անց վարդ-աղջիկ» եւ այլն։ Այսպիսի նման գոհարներով մենք սփռուած ենք տեսնում նաեւ Ալ. Ծատուրեանի, Յովհ. Թումանեանի եւ մանաւանդ Աւ. Իսահակեանի բանաստեղծութիւններում։

Սգաւոր Իդէալիստը երգում է՝

Ո՞ւր ես գալի, այ գարուն...
Ջո՞ւր ես գալի, այ գարուն...

Բանաստեղծի այս անյոյս յոռետեսութիւնը յիշեցնում է Դուրեանին, Լէօպարդիին եւ Ակկերմանին։ Բայց Յովհաննիսեանը լաւատեսընաւորութեամբ է օժտուած, նա այս առողջ գաղափարով է մեզ լոյս աշխարհ առաջնորդում՝

Հաւատում ենք, թէ կը գայ օր
Բաղդը երազ չի թուիլ մեզ,
Թէ կը բացուի նա փառաւոր
Առաւօտեան վառ շողի պէս։
Թէ կը ցամքի դառն արտասուք,
Լոյս կը դառնայ այս սեւ գիշեր.
Կր փարատուին կսկիծ եւ սուգ —
Կը գայ մայիս շնորհաբեր։

Եւ նա անհանդուրժելի բուռն զգացմունքով ոգեւորութեան կոչ եւ խրախոյս է անում դէպի շղթայակապ մայր-հայրենիքի եւ տառապեալ ազգի փրկութեան խարիսխը՝

Մօտ է ժամանակ, զարթի՛ր, սիրելիս,
Փրկութեան աստղը վառւում է ճակտիդ,
Ոտքի՛ ե՛լ, հոգիս, շղթադ թօթափի՛ր,
Աչքդ բաց արա՛ այդ մահուան քընից.
Թէեւ մահամերձ՝ [illegible], —
Որդէ՞դ [illegible]։

digitised by A.R.A.R.@

Ապագայի վառ յոյսերով եւ գեղեցիկ զգացմունքներով լի են Յովհաննիսեանի բանաստեղծութիւնները։ Եւ մենք կարդալով գեղարուեստական պատկերացումներով հմայիչ այդ բանաստեղծութիւնները՝ մեր սրտին շատ մօտ ենք նրանց ընդունում եւ նրանց սքանչելի տպաւորութեան տակ կարծես թարմանալով երիտասարդանում ենք։

Որովհետեւ հրապարակի վրայ մեր առաջն է դրած բանաստեղծի մեծ ժողովածուն, որ ներկայացնում է նրա հաւաքական բանաստեղծութիւնների հաւաքածուն. մենք այժմ վստահութեամբ կարող ենք գնահատութիւնը որոշել եւ իսկապէս բնորոշել բանաստեղծի դէմքը։ Սէրը վեհութեամբ դաշնակող եւ զուտ արուեստը եւ զգայմունքը երգող բնաշնորհ բանաստեղծ է Յովհաննիսեանը։ Այո, նա վշտի եւ սիրոյ երգիչ է Սմբատ Շահազիզի նման՝ բառի բուննշանակութեամբ, իսկ հայրենասիրական մեղեդիներ հնչեցնելու մէջ մի Սֆօռ Իդէօլէօ։ Նրա բանահիւսութեան սրութեար գողտրկութեան եւ նրբին երաժշտական ներդաշնակութեան է հասցրած եւ որ գլխաւորն է նրա յառաջադիմական ազատամիտ աշխարհահայեցողութիւնը տանում է մեզ գաղափարական լուսածին աշխարհ, տանջուող մարդկութեան ազատատենչ ձգտումների բովարանը, ներշնչելով մեր մէջ սիրոյ եւ եղբայրութեան, լուսոյ եւ ազատութեան սկրզբունքներ՝ վսեմագոյն վշտերով ու տանջանքներով տոգորուած։

Բարոյական պարտք ենք համարում անկեղծ շնորհակալութիւն յայտնելու Բագուի "Կուլտուրական Միութեան ընկերութեանը", որ ձեռնամուխ լինելով բանաստեղծի վերջին հրատարակութիւնը ազատեց փոշու տակից եւ կորստի ճանկերից այդ թանկագին գանձերը՝ զուտ բանաստեղծական։

Տաշքավէր.   ԳՐԻԳՈՐ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

# ՊԱՏՄԱԿԱՆ

## ԿԻՒՐԻՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎՐԱՑ

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ-ՎՐԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՑ ԵՕԹՆԵՐՈՐԴ ԴԱՐՈՒ ՄԷՋ

*Քառասնամեայ շրջան Հայոց եկեղ. Պատմութեան 574–610:*

(Շարունակութիւն)

—

### ԳԼՈՒԽ Ը.

Կիւրիոնի գործունէութիւնն ի Վիրս։ Խուժէից Նեստորականաց խնդիրը եւ Գր. Մեծի Թուղթը առ Կիւրիոն։

Ուխտանէս (Բ. 4) կրօնական տեսակէտով միայն նկատած է Կիւրիոնի գործունէութիւնն, զոր կը պատմէ այսպէս. Յորժամ "եհաս Կիւրիոն ի Վիճակ իւրոյ իշխանութեանն եւ ի քաղաքն իւրեանց որ կոչի Մցխիթայ, ժողովէ առ ինքն զեպիսկոպոսունսն հանդերձ լաւօք աշխարհին եւ զիշխանս եւ զնախարարս, եւ նուաճէ նոքօք հանդերձ առ հասարակ զամենայն աշխարհն ընդ իւրով իշխանութեամբ"։ Այս ընդհանուր խօսքերէն սակայն դժուարին է որոշ բան մ'եզրակացնել։

Վրաստան խռովութեան մէջ էր, երբ կուսեց Կիւրիոն հայրենի հողին վրայ, թէ ինչ պատճառաւ, կարելի չէ ճշդիւ ըսել[1]։ Բայց կը յաջողի խաղաղել, շնորհիւ արքայից արքայի՝ Խոսրով Բ.ի տուած առանձնաշնորհութեանց եւ ճոխութեան։ Այս մասին մեր տեղեկութիւնն կը քաղենք ինքնին Կիւրիոնի թղթէն, ուր Սմբատայ այսպէս կը նկարագրէ. "Վասն որոյ է ինչ որ այժմ եղեւ հակառակութիւն ի մերում աշխարհիս, որ մինչեւ յարքայից արքայ եհաս. եւ արքայից արքայ բարերարութեամբ արար զիս աշխարհարձակ, եւ վասն եկեղեցեաց եւ հաւատոյ եւ ընդ միմեանս խաղաղութիւն ունելոյ պատուէր ի վերայ արար. եւ յորժամ բարեաւ յաշխարհ եկաք, ի մեր ձեռն Աստուած զհակառակութիւնն զայն եբարձ ի միջոյ[2]"։ Եւ "բարերարութեանս" իմաստն քիչ վերջը կը պարզէ. "զի ազտիհ որ[3] ինձ հասեալ է ի տերանց վասն իւրեանց բարերարութեան"։ Դժբախտաբար ասով ալ մութ կը մնայ դեռ իրողութիւնը, որուն լուսաւորութիւնն այնպէս հետաքրքրական է։ Այլուստ (Թուղթ Կիւրիոնի առ Աբր. 167) որչափ կ'երեւայ այս "բարերարութիւնը" կը հայի նաեւ մասնաւորապէս Կիւրիոնի անձին. վասն զի յիշելով Խոսրովու Վրաց շնորհած "բարերարութիւն"ները կը յաւելու "եւ բարի անձինս իմոյ՝ լաւագոյն քան զամենայն ընկերաց իմոց"։ Այս առանձնաշնորհութիւնք սակայն դժուարին է հաստատել թէ երբ ընդունեցաւ Կիւրիոն. յամենայն դէպս 598—607ի մէջերը։ Մտադրութեամբ կարդալով յիշեալ տողերն, կը տեսնուի նաեւ թէ Կիւրիոն Վրաց իբերն խաղաղելու համար անձամբ ներկայացած ալ է Խոսրովու եւ այնպէս յաջողութեամբ ի գլուխ հանած ամենայն ինչ։

Կիւրիոն իւր առ Սմբատ թղթին մէջ ակնարկած "հակառակութեամբ" մասամբ իւիք կը յարաբերէ "Խուժէից Նեստորականներու" խնդիրը ի Վիրս, զոր այնպէս ուժգնութեամբ ջանաց լուծել։

---

1 Հմմտ. Հանդ. 1907, էջ 347-350։

2 Գիրք Թղթոց էջ 170։

3 Ազտէհ կամ Ազտէհօր, զոր կը գործածէ հոս Կիւրիոն եւ այլուր կը գրէ առ Սմբատ. "Ազատիհք ձեր եւ փառաւորութիւն" (Գիրք Թղթ. 171), այլուստ անծանօթ է։ Կ'երեւայ թէ պարսկական է ծագումը. հմմտ. պարսկ. azadeskari, ազատ, ինքնիշխան. Հոմանիշ կը թուի ասոր "աշխարհարձակը", զոր կը գործածէ Կիւրիոն (հմմտ. եւ Արքայից արքայ բարերարութեամբ արար եւ զմեզ յաշխարհարձակ հաւատոյ եւ եկեղեցեաց կարգի աւելագոյն պատուէր ի վերայ արար, զի ընդ միմեանս խաղաղութիւն եղիցի քանզի էր ինչ որ լուաւ… անդ էջ 168)։ — Այս ազտէհն կ'ակնարկէն արդեօք Յուրաւայ Եկեղեցւոյն առ Վրթանէս թղթին մէջ Կիւրիոնի համար ըսուածները. "Թէպէտ եւ ի ժամու ի անոտի մեծութենէն իւրեւ զկեա ինչ յարուցեալ…" (անդ էջ 133)։